

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ԳԱՎԱՌԻ ԱՎԱԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՔՈՒԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԽՈՐՀՐԴԻ  
2013Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ  
ՔՈՒԼԵՋԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Կ.Ն.ԿՈՒՌՈՅԱՆ

« 11 » սեպտեմբերի 2013թ.

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

« Գավառի ակ. Ա.Թամամշնի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»  
ՊՈԱԿ-ի

## ԱՄԲԻՈՆԻ

### 1. Ընդհանուր դրույթներ

1. Ամբիոնը ուսումնական կառուցվածքային ստորաբաժանում է, որը միավորելով մասնագիտական ընդհանրություն ունեցող մանկավարժների, իրականացնում է ուսումնական պլանի որոշակի մասի ուսուցումը:
2. Ամբիոնի իրավասությունները և գործունեության սկզբունքները կարգավորվում են քոլեջի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:

### 2. Ամբիոնի գործառույթները

Ամբիոնը՝

- 2.1 իրականացնում է ուսումնական գործընթաց՝ ուսումնական պլաններին, առարկայական և մոդուլային ծրագրերին համապատասխան,
- 2.2 մասնակցում է մասնագիտական ուսումնական պլանների՝ իրեն առնչվող ենթաբաժինների առարկայական և մոդուլային ծրագրերի մշակման գործընթացին,
- 2.3 կազմակերպում և իրականացնում է ստեղծագործական, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների տարբեր ձևեր,

### 3. Ամբիոնի կառավարումը՝

3.1 ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը

### 4. Ամբիոնի վարիչը՝

- 4.1 հաշվետու է ամբիոնին, քոլեջի տնօրենին և քոլեջի ուսումնամեթոդական խորհրդին
- 4.2 ներկայացնում է ամբիոնը քոլեջում
- 4.3 նախագահում է ամբիոնի նիստերում
- 4.4 վերահսկում է ամբիոնի աշխատողների պարտականությունների կատարման ժամկետներն ու որակը
- 4.5 մասնակցում է քոլեջի ուսումնամեթոդական խորհրդի աշխատանքներին,
- 4.6 քննարկում է աշխատանքային և օրացուցային թեմատիկ պլանները
- 4.7 կազմում և սահմանված կարգով ներկայացնում է ամբիոնի տարեկան հաշվետվությունը

4.8 նիստեր է գումարում առնվազն ամիսը մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ:

## 5. Ամբիոնի նիստը.

5.1 ներկայացնում է առաջարկություններ առարկաների և մոդուլների ծրագրերում փոփոխություններ կատարելու մասին

5.2 ներկայացնում է առաջարկություններ ուսումնական նոր մասնագիտությունների և առարկայական դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

## 6. Ամբիոնի կազմի մեջ կարող են մտնել՝

6.1 ուսումնական լաբորատորիաներ,

6.2 մասնագիտական լսարաններ,

6.3 կաբինետներ,

6.4 համակարգչային լսարաններ

## 7. Ամբիոնը պետք է ունենա հետևյալ պարտադիր փաստաթղթերը՝

7.1 ամբիոնի կանոնակարգ,

7.2 աշխատանքային, միջոցառումների և վերահսկողության պլաններ,

7.3 ամբիոնի նիստերի արձանագրություններ,

7.4. դասալսումների մատյան: